Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-521-27.02.2023-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Օրգանական գյուղատնտեսության մասին» 2008 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-23-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում «կամ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ներառված օրգանական գյուղատնտեսության ոլորտում հավատարմագրում իրականացնող միջազգային կազմակերպությունների հավատարմագրած կազմակերպություն» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմին» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «գրանցամատյանը» բառից հետո լրացնել «և հրապարակում է պաշտոնական էլեկտրոնային կայքէջում» բառերը:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել 7-րդ և 8-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7. Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի մակնշման, պահպանման, փոխադրման, իրացման պահանջների նկատմամբ վերհսկողությունն իրականացնում է սննդամթերքի անվտանգության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող լիազորված մարմինը:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված օրգանական գյուղատնտեսական արտադրանքի մակնշման, պահպանման, փոխադրման, իրացման պահանջների

խախտումը հանգեցնում է վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթները չեն տարածվում «մաքսային տարանցում», «մաքսային պահեստ» և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ներմուծվող օրգանական գյուղատնտեսական սննդամթերքի խմբաքանակների վրա:»:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքից բխող այլ նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները և լրացումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրացուցային օրվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Օրգանական գյուղատնտեսության մասին» 2008 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-23-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում «կամ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ներառված օրգանական գյուղատնտեսության ոլորտում հավատարմագրում իրականացնող միջազգային կազմակերպությունների հավատարմագրած կազմակերպություն» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմին» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «գրանցամատյանը» բառից հետո լրացնել «եւ հրապարակում է պաշտոնական էլեկտրոնային կայքէջում» բառերը:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել 7-րդ և 8-րդ մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7. Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի մակնշման, պահպանման, փոխադրման, իրացման պահանջների նկատմամբ վերհսկողությունն իրականացնում է սննդամթերքի անվտանգության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող լիազորված մարմինը:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված օրգանական գյուղատնտեսական արտադրանքի մակնշման, պահպանման, փոխադրման, իրացման պահանջների խախտումը հանգեցնում է վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «4. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի դրույթները չեն տարածվում «մաքսային տարանցում», «մաքսային պահեստ» եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ներմուծվող օրգանական գյուղատնտեսական սննդամթերքի խմբաքանակների վրա:»:

Հոդված 5. ~~Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքից բխող այլ նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները եւ լրացումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրացուցային օրվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-521 -27.02.2023-ՏՏԳԾ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի					
1	**Կառավարություն**	**3-րդ հոդված**	Հոդվածի վերնագրում՝ «7-րդ» բառից հետո լրացնել «և 8-րդ մասերով» բառերը: Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի պահպանման, փոխադրման, իրացման պայմաններում և մակնշման կարգում անձանց համար պարտականություններ նախատեսող դրույթները (որոնց	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համար սահմանվում է վարչական պատասխանատվություն) օրենքով սահմանելու անհրաժեշտությամբ պայմանավորված նախագծի 3-րդ հոդվածով օրենքի 9-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված օրգանական գյուղատնտեսական արտադրանքի մակնշման, պահպանման, փոխադրման, իրացման պահանջների խախտումը հանգեցնում է վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:»:		
2.	**Կառավարություն**	**5-րդ հոդվածի վերնագիր**	5-րդ հոդվածի վերնագիրն հանել հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի					
1.	**Կառավարություն**	**1-ին հոդված**		Ընդունվել է:	Ընդունվել է:

			1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի լրիվ անվանումը լրացնել «1985 թվականի դեկտեմբերի 6-ի» բառերից հետո: 2. Հոդվածով լրացվող նոր «110.4-րդ» բառի փոխարեն լրացնել «110.6-րդ» բառը, քանի որ Օրենսգրքում արդեն իսկ առկա են 110.4-րդ և 110. 5-րդ հոդվածներ: 3. 1-ին հոդվածով՝ Օրենսգրքում լրացվող նոր՝ 110.6-րդ հոդվածի 1-ին մասում «պայմանների խախտումն արձանագրելիս՝ առաջացնում են» բառերը փոխարինել «պայմանների խախտումն առաջացնում է» բառերով, իսկ 2-րդ մասում նշված «խախտման դեպքում՝ առաջացնում են» բառերը փոխարինել «խախտումն առաջացնում է՝» բառերով:		
2.	**Կառավարություն**	**2-րդ հոդվածում**	1. Տեխնիկական վրիպակը շտկել հղում կատարելով ճիշտ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հոդվածին՝ նշված «2382» թիվը փոխարինել «238^2» թվով: 1-ին հոդվածի փոփոխությամբ պայմանավորված «110.4-րդ» բառի փոխարեն լրացնել «110.6-րդ» բառը:		